ՄԳՏԿ անդամ պետությունների կառավարիչների հանձնաժողովի նստաշրջան Մոսկվայում
/2009 թ., մարտի 26/

2009 թվականի մարտի 26-ին ՌԴ Մոսկվա քաղաքում տեղի ունեցավ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) անդամ պետությունների կառավարիչների խորհրդի 48-րդ նստաշրջանը, որին մասնակցելու նպատակով մարտի 24-26-ը եռօրյա այցով Մոսկվա էր մեկնել ՄԳՏԿ-ում կոորդինացիոն կոմիտեի անդամ, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը:

Նստաշրջանին մասնակցում էին ՄԳՏԿ անդամ կողմերի՝ Կանադայի, Եվրամիության, Ճապոնիայի, Կորեայի, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Նորվեգիայի, Հայաստանի Հանրապետության, Բելոռուսիայի, Ղազախստանի, Ղրղզստանի եվ Տաջիկստանի ներկայացուցիչները:

Օրակարգային հիմնական հարցերից էր ծրագրերի ֆինանսավորման վերջնական աղյուսակի հաստատումը: ՄԳՏԿ-ն հաստատեց 10 նոր ծրագիր՝ 2.07 մլն ԱՄՆ դոլար եւ 385 հզր եվրո ընդհանուր արժողությամբ՝ ՌԴ-ից, Հայաստանից, Բելոռուսիայից, Ղազախստանից, Վրաստանից ներկայացված ծրագրերը ֆինանսավորելու նպատակով:

Հայաստանից ֆինանսավորման ներկայացված ծրագրերից հավանության արժանացավ ՀՀ ԳԱԱ Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի ներկայացրած ծրագիրը (A 1671):

Հաջորդ ֆինանսական կիսամյակում քննարկելու համար նախագծերի ներկայացման վերջնաժամկետ նշանակվեց 2009 թվականի ապրիլի 20-ը:

Հաստատվեցին 2009 թ. վարչական բյուջեն եւ 2009 թ. կենտրոնի լրացուցիչ բյուջեի շրջանակներում ծրագրային գործունեության նախագծերը, կողմերի անհատական ու ընդհանուր ներդրումների ծավալները :

Քննարկվեցին նաեւ ծրագրային նոր մոտեցումների, համաֆինանսավորման մեխանիզմների, ծրագրերի մշակման արդյունավետությունը բարձրացնելու հետ կապված առաջարկներ:

Խորհուրդը քննարկեց նաեւ անդամ պետությունների՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կառույցների մասնակցությամբ ծրագրերի եւ նախագծերի համաֆինանսավորման խնդիրները: Ընդգծվեց համաֆինանսավորման վերաբերյալ համաձայնագրերի արագ կնքման անհրաժեշտությունը: Նման համաձայնագրեր կնքելու առաջարկություններ ստացան Ռուսաստանի Դաշնությունը, Հայաստանի Հանրապետությունը, Ղրղզստանը եւ Բելառուսիան:

Հաջորդ նստաշրջանը պլանավորվեց անցկացնել Մինսկում (Բելառուսիա) 2009 թվականի հուլիսի 9-ին: